

Միջավայրային վտանգի վերաբերյալ հանրային իրազեկման պետության պոզիտիվ պարտավորությունը

Թումանյան Կարեն

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-142>

Հանգուցային բառեր. «միջավայրային վտանգ», հանրային իրազեկում, տեղեկատվության մատչելիություն, նախագրուշության սկզբունք, տեղեկատվական հավասարություն, շրջակա միջավայրի անկախ խորհուրդ

Մեթոդներ: Հետազոտությունը ներառել է սահմանադրական և ներպետական իրավական նորմերի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործվել են համեմատական իրավական մեթոդ, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդներ:

Ներածություն

Շրջակա միջավայրի պահպանությունը և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը XXI դարի սկզբներին դարձել են ժամանակակից սահմանադրական իրավունքի կարևոր ուղղություններից մեկը: Բնապահպանական խորացող խնդիրները՝ կլիմայական փոփոխությունները, կենսաբազմազանության կրճատումը, բնական ռեսուրսների ինտենսիվ շահագործումը և արդյունաբերական աղտոտումը դիտարկվում են ոչ միայն որպես էկոլոգիական, այլև սահմանադրաիրավական և մարդու իրավունքների պաշտպանության համակարգային մարտահրավերներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը հետևողականորեն հաստատում է, որ շրջակա միջավայրի պաշտպանությունը հանդիսանում է կյանքի իրավունքի և անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքի իրականացման պայմաններից մեկը:

Ժամանակակից սահմանադրաիրավական դոկտրինայում աստիճանաբար ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մարդու իրավունքների արդյունավետ իրացումը չի կարող սահմանափակվել դրանց ձևական ամրագրմամբ: Իրավունքների իրական բովանդակությունը կախված է այն նյութական և ինստիտուցիոնալ պայմաններից, որոնց շրջանակում դրանք իրականացվում են: Այս համատեքստում շրջակա միջավայրի վիճակը հանդիսանում է որպես իրավական գնահատման կարևոր չափանիշ, քանի որ այն ազդում է կյանքի, առողջության և արժանապատիվ ապրելու վրա: Հետևաբար, շրջակա միջավայրի պահպանությունը պետք է դիտարկվի որպես սահմանադրական արժեքների նյութական հիմք:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում հանրային իրազեկումը՝ որպես շրջակա միջավայրի պաշտպանության և մարդու իրավունքների արդյունավետ իրացման գործիք: Տեղեկացվածությունը հնարավորություն է տալիս անձանց գնահատել միջավայրային ռիսկերը, ձևավորել տեղեկացված դիրքորոշում և մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին: Ուստի այն հանդես է գալիս և որպես առանձին իրավունք, և հիմնարար իրավունքների իրականացման նախապայման՝ ապահովելով դրանց բովանդակային, այլ ոչ թե ձևական իրացումը:

Պետության պոզիտիվ պարտավորությունները և «միջավայրային վտանգ» հասկացության տեսական հիմքերը

Ժամանակակից մարդու իրավունքների տեսությունը, որը զարգացել է Միավորված Ազգերի Կազմակերպության Տնտեսական, Սոցիալական և Մշակութային Իրավունքների

հարցերով կոմիտեի և միջազգային իրավական դոկտրինի շրջանակներում, առանձնացնում է պետության պարտավորությունների եռամակարգ՝ հարգելու պարտավորությունը, պաշտպանելու պարտավորությունը և իրականացնելու պարտավորությունը [24, 14]:

Հարգելու պարտավորությունը (obligation to respect) ներկայացնում է պետության նեգատիվ պարտավորություն՝ ձեռնպահ մնալ իրավունքների խախտումից: Շրջակա միջավայրի համատեքստում սա նշանակում է, որ պետությունը չպետք է ինքը վնասի շրջակա միջավայրը կամ թույլ տա իր մարմինների կողմից նման վնասի պատճառումը: Պաշտպանելու պարտավորությունը (obligation to protect) պահանջում է, որ պետությունը կանխի երրորդ անձանց կողմից իրավունքների խախտումը: Սա արդեն պոզիտիվ պարտավորություն է, որը պահանջում է ակտիվ միջոցառումներ՝ օրենսդրական, վարչական, դատական [14, 15]: Շրջակա միջավայրի ոլորտում սա ենթադրում է մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի վնասման կանխումը՝ կարգավորման, լիցենզավորման, վերահսկողության և պատասխանատվության մեխանիզմների միջոցով:

Իրականացնելու պարտավորությունը ամենաընդգրկունն է և պահանջում է պետությունից ակտիվորեն ստեղծել պայմաններ: Սա ներառում է օրենսդրական շրջանակի մշակումը, ինստիտուցիոնալ կարողությունների ստեղծումը, ռեսուրսների հատկացումը, գիտական հետազոտությունների ֆինանսավորումը, հանրային իրազեկման ծրագրերը և այլն [15, 1]:

Եվրոպական դատարանը, մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի դրույթները «կենդանի գործիք» դոկտրինայի լույսի ներքո, աստիճանաբար ընդլայնել է պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակը: Մարքսն ընդդեմ Բելգիայի (Marckx v. Belgium) գործով Եվրոպական դատարանը առաջին անգամ հստակորեն ձևակերպեց, որ «հարգելու» (respect) հասկացությունը «ոչ միայն ենթադրում է պետության պարտավորությունը ձեռնպահ մնալ միջամտությունից, այլ նաև ներառում է պոզիտիվ պարտավորություններ՝ ուղղված անհատի մասնավոր կյանքի արդյունավետ հարգանքի ապահովմանը» [5]:

«Էյրիս ընդդեմ Իռլանդիայի (Airey v. Ireland)» գործով Եվրոպական դատարանը հաստատեց, որ «Կոնվենցիայի նպատակն ու հիմնական արժեքները կստանան իրենց լրիվ արտահայտությունը, եթե պետությունները պարտավորվեն ձեռնպահ մնալ իրավունքների խախտումից, ինչպես նաև ձեռնարկել պոզիտիվ միջոցներ՝ ապահովելու դրանց արդյունավետ պաշտպանությունը» [9]: Շրջակա միջավայրի հարցերում պոզիտիվ պարտավորությունների դոկտրինան ձևավորվել է 1990-ական թվականներից սկսած՝ López Ostra v. Spain (1994 թ.), Guerra and Others v. Italy (1998 թ.), Hatton and Others v. United Kingdom (2003 թ.) և հետագա գործերի շարքում [10, 4]:

Շրջակա միջավայրի իրավունքը դասակարգվում է որպես «երրորդ սերնդի» կամ «համերաշխության իրավունք» (solidarity right), որը տարբերվում է դասական քաղաքացիական-քաղաքական (առաջին սերնդի) և սոցիալ-տնտեսական (երկրորդ սերնդի) իրավունքներից [1]:

Շրջակա միջավայրի իրավունքը նպատակ ունի պաշտպանելու առանձին անձանց անհատական շահերը, ինչպես նաև հանրային շահը՝ որպես հասարակության ընդհանուր բարեկեցության հիմք: Այս իրավունքի կարգավորման առարկան իր բնույթով անդրազգային և միջսերնդային է, ուստի այն ներառում է համայնքների, ժողովուրդների, ինչպես նաև ապագա սերունդների շահերի պաշտպանությունը [1, 17]: Այդ համատեքստում շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկվում է որպես համընդհանուր արժեք, որի նկատմամբ պետությունը կրում է անհատների ուղղված, ինչպես նաև հանրության լայն շրջանակների իրավունքների ապահովմանն ուղղված պոզիտիվ պարտավորություններ:

Մարդու արժանապատվությունը և շրջակա միջավայրի պայմանների կապը պահանջում է պետական քաղաքականության վերաիմաստավորում: Եթե արժանապատվությունը հանդիսանում է սահմանադրական համակարգի հիմքը, ապա պետությունը չի կարող սահ-

մանափակվել միայն տնտեսական արդյունավետության կամ զարգացման ցուցանիշներով: Պետական որոշումների կայացման գործընթացում պետք է առաջնահերթորեն գնահատվեն դրանց ազդեցությունները մարդու կյանքի պայմանների, առողջության և արժանապատիվ գոյության վրա [15]:

Եվրոպական դատարանի և միջազգային իրավական դոկտրինայի զարգացումները վկայում են, որ արժանապատվությունը աստիճանաբար մեկնաբանվում է որպես «կյանքի որակի նվազագույն շեմ» [15]: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում սա նշանակում է, որ պետությունը պարտավոր է ապահովել այնպիսի էկոլոգիական պայմաններ, որոնք չեն իջեցնում կյանքի որակը այդ նվազագույն շեմից ներքև: Երբ այդ շեմը խախտվում է, արժանապատվության իրավական պաշտպանությունը պահանջում է և կանխարգելման միջամտություններ, ինչպես նաև «միջավայրային վտանգի» վերաբերյալ պարտադիր հանրային իրազեկում:

«Միջավայրային վտանգ» է այնպիսի իրավիճակը, որը բխում է շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող գործունեությունից կամ անգործությունից և կարող է ազդել մարդու կյանքի, առողջության կամ բարեկեցության վրա: Այն բնութագրվում է վնասի իրական կամ էական հավանականությամբ և պահանջում է կանխարգելիչ միջամտություն [15, 1]:

Նշված գիտական կատեգորիայի ներդրումը հնարավորություն է տալիս շրջակա միջավայրի պաշտպանության իրավական մեխանիզմները գործարկել ռիսկի փուլում՝ մինչև վնասի փաստացի առաջացումը կամ անդառնալի հետևանքների նյութականացումը: Վերոնշյալ հասկացության կառուցվածքում առանձնահատուկ նշանակություն ունի «իրական կամ հավանական վնասի ռիսկ» տարրը, որի իրավական բովանդակության հստակեցումը հնարավորություն է տալիս բացահայտել պետության պոզիտիվ պարտավորությունների ծավալը և դրանց ակտիվացման պահը [15, 1]:

«Իրական կամ հավանական վնասի ռիսկի» տարրը միջավայրային վտանգի իրավական կառուցվածքում ունի էական նշանակություն, քանի որ այն իրավական գնահատման կենտրոնը տեղափոխում է վնասի փաստացի առաջացումից դեպի ռիսկի գոյության և բնույթի գնահատում: Տվյալ համատեքստում տարբերակվում են ռիսկի երկու հիմնական տեսակ՝ իրական ռիսկ՝ հիմնված հաստատված տվյալների վրա, և հավանական ռիսկ՝ ձևավորվող անորոշության պայմաններում: Այս տարբերակումը տեսական և գործնական նշանակություն ունի, քանի որ այն պետության պոզիտիվ պարտավորությունների ծավալի և ինտենսիվության որոշման չափանիշ է [15, 1]:

Ֆրանսիայի շրջակա միջավայրի խարտիան (*Charte de l'environnement*, 2005), ամրագրելով նախագուշտության և հանրության մասնակցության սկզբունքները, ենթադրում է պետության պարտավորությունը ապահովելու վտանգների վերաբերյալ տեղեկատվության ժամանակին և հասկանալի տրամադրում, քանի որ առանց դրա այս սկզբունքների գործնական իրացումը անհնար է [26]: Նմանապես, Գերմանիայի հիմնական օրենքի (*Grundgesetz*) 20ա հոդվածով նախատեսված շրջակա միջավայրի պաշտպանության պետական պարտավորությունը մեկնաբանվում է նաև որպես նյութական միջավայրի պահպանություն և որպես կանխարգելիչ կառավարման պարտականություն, որը ներառում է ռիսկերի վերաբերյալ հանրության իրազեկումը [3]:

Էկվադորի Սահմանադրությունը (2008) և Հարավային Աֆրիկայի Սահմանադրությունը (1996) առավել ընդգծված կերպով կապում են շրջակա միջավայրի որակը մարդու հիմնարար իրավունքների հետ՝ ձևավորելով այնպիսի իրավական շրջանակ, որտեղ տեղեկատվության մատչելիությունը հանդիսանում է որպես այդ իրավունքների իրացման նախապայման [8, 13]: Այս մոտեցման մեջ տեղեկատվության տրամադրումը դիտարկվում է ոչ թե որպես վարչական ընթացակարգ, այլ որպես պետության պոզիտիվ պարտավորություն,

որն ուղղված է պահովելու անձանց կարողությունը գնահատելու միջավայրային ռիսկերը և պաշտպանելու իրենց իրավունքները [15, 1]:

Միջազգային փորձի վերլուծությունը տեղեկատվության մատչելիության և պետության պոզիտիվ պարտավորությունների համատեքստում ցույց է տալիս, որ ժամանակակից սահմանադրական համակարգերում շրջակա միջավայրի պաշտպանությունը աստիճանաբար վերածվում է ակտիվ իրավական պարտավորությունների համալիրի, որի կարևոր տարրերից մեկը հանրային իրազեկումն է [24, 15]:

Տեղեկատվության մատչելիությունը միջավայրային վտանգի պայմաններում

Տեղեկատվության մատչելիության պահանջը ժամանակակից իրավական դոկտրինայում ձևաչափ է բերել բազմաշերտ բնույթ, որը կարելի է մեկնաբանել որպես իրավական ստանդարտների համալիր, այլ ոչ թե մեկ չափորոշիչ [12, 22]: Մույն վերլուծությունը նպատակ ունի վերլուծել տեղեկատվության մատչելիության դոկտրինալ հիմքերը միջազգային իրավունքի, մարդու իրավունքների և բնապահպանական իրավունքի համատեքստում [12, 19]:

Մարդու տեղեկացված լինելը ներառում է տեղեկատվության ֆիզիկական և իմացաբանական հասանելիությունը, գործնական կիրառելիությունը և հավասար հասանելիությունը տարբեր սոցիալական խմբերի համար [12, 24]: Իմացաբանական հասանելիությունը ենթադրում է տեղեկատվության պարզ և հասկանալի ներկայացում [12]:

Այս պահանջը հատկապես կարևոր է բնապահպանական տեղեկատվության դեպքում, որը հաճախ ունի գիտատեխնիկական բարդ բնույթ (օրինակ՝ աղտոտման ցուցանիշներ, ռիսկերի մոդելավորում, քիմիական բաղադրիչներ) [12]: Ուստի պետության պարտավորությունը չի սահմանափակվում տվյալների հրապարակմամբ, այլ ներառում է նաև դրանց թարգմանումը հանրային հասկանալի լեզվի [12, 24]:

Տեղեկատվության մատչելիության ընդլայնված ընկալումը բխում է Օրհուսի կոնվենցիայի համակարգային տրամաբանությունից, որի կարևոր տարր է հանդիսանում արդյունավետությունը, այսինքն՝ այնպիսի, որը իրականում հնարավորություն է տալիս անձին օգտագործել այդ տեղեկատվությունը իր իրավունքների պաշտպանության համար [12]:

Եվրոպական դատարանը, թեև ուղղակի չի ձևակերպում «իմացաբանական մատչելիության» սկզբունքը, սակայն պրակտիկական փաստացի շարժվում է այդ ուղղությամբ [19]:

Գուեռա և ուրիշներ ընդդեմ Իտալիայի (*Guerra and Others v. Italy, 1998*)» գործում Եվրոպական դատարանը հաստատեց, որ պետությունը պարտավոր է տրամադրել տեղեկատվություն արդյունաբերական վտանգների մասին, քանի որ դրա բացակայությունը խաթարում է անձանց կարողությունը պաշտպանել իրենց առողջությունն ու բարեկեցությունը (Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված) [16]: Մույն գործը կարևոր է նրանով, որ ընդգծում է տեղեկատվության տրամադրման և դրա գործնական օգտակարության անհրաժեշտությունը:

«Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի (*Öneryıldız v. Turkey, 2004*)» գործում Եվրոպական դատարանը ընդգծեց պետության պոզիտիվ պարտավորությունը՝ իրազեկել հանրությանը այնպիսի վտանգների մասին, որոնք կարող էին ընդգրկել նրանց կյանքը, առողջությունը և բարեկեցությունը [24]: Այս գործը ընդգծեց տեղեկատվության մատչելիության կապը կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) համատեքստում:

Տեղեկատվության իրավունքը որպես ինքնուրույն բաղադրիչ զարգացվել է նաև «Տարսաշագ ազ Մաբադշագոգոկերտ ընդդեմ Հունգարիայի (*Társaság a Szabadságjogokért v. Hungary*)» և «Հաջին ընդդեմ Ադրբեջանի (*Hajiyev v. Azerbaijan*)» գործերով՝ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակում, որտեղ դատարանը հաստատել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության հասանելիությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար տարր [18, 14]:

Վերջին զարգացումները, մասնավորապես «Վերեին Կլիմա Սենյորինեն Շվայց և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland)» գործում Դատարանի մեկնաբանությունը ցույց են տալիս, որ պոզիտիվ պարտավորությունների դոկտրինան տարածվում է նաև կլիմայական ռիսկերի և երկարաժամկետ միջավայրային վտանգների վրա [5]:

Այս իրավիճակում պետությունը հանդես է գալիս որպես միջնորդ և հավասարակշռող սուբյեկտ, որի պարտականությունն է ապահովել տեղեկատվության այնպիսի ձևակերպում և տարածում, որը նվազեցնում է այս կառուցվածքային անհավասարությունը [12, 24]: Այս մոտեցումը համահունչ է «տեղեկատվական անհավասարության տեսության» տեղեկատվական ասիմետրիայի տնտեսագիտական դոկտրինային հետ, որն իրավական հարթակում ենթադրում է պետության կողմից ակտիվ միջամտություն տեղեկատվական կարգավորման դաշտում [24]:

Մարդու տեղեկացվածությունը հանդիսանում է իրավական կարողությունների հիմք [12, 24]: Եթե տեղեկատվությունը անհասկանալի է կամ դժվարամատչելի, ապա՝ հանրային մասնակցությունը դառնում է ձևական, դատական պաշտպանության իրավունքը՝ տեսական, իսկ վերահսկողությունը՝ անարդյունավետ [12]: Այս առումով տեղեկատվությունը հանդիսանում է իրավունքի իրացման նախապայման երաշխիք, որը նախորդում և պայմանավորում է այլ իրավունքների արդյունավետ իրացումը [12, 24]: Այն կարող է դիտարկվել որպես այնպիսի հիմնարար պայման, որը հնարավորություն է տալիս անձին կատարել տեղեկացված ընտրություն իր կյանքի պայմանների վերաբերյալ՝ վերածելով ձևականորեն ամրագրված իրավունքը իրական կարողության և գործնական իրացման միջոցի [12]:

Տեսական առումով հրապարակվող տեղեկատվությունը պետք է լինի նաև հասանելի և մատչելի [12, 24]: Մա ենթադրում է դրա ներկայացում պարզ և հասկանալի լեզվով (լեզվական մատչելիություն), հստակ կառուցվածքով և ընկալելի ձևաչափերով (կառուցվածքային մատչելիություն), ժամանակակից թվային հարթակներով և տեխնոլոգիական միջոցներով (տեխնոլոգիական մատչելիություն), տարբեր սոցիալական խմբերի համար հավասար հասանելիության ապահովմամբ (սոցիալական մատչելիություն), ինչպես նաև բարդ գիտական տվյալների հանրամատչելի մեկնաբանմամբ (բովանդակային պարզություն) [12]: Այս չափանիշների համադրումը ապահովում է, որ տեղեկատվությունը ծառայի ոչ թե ձևական իրազեկմանը, այլ իրականում հնարավորություն տա անձանց հասկանալու միջավայրային ռիսկերը և արդյունավետորեն իրացնելու իրենց իրավունքները [12, 24]:

Հանրային իրազեկման նյութական չափանիշները՝ ժամանակայնությունը, լիարժեքությունը և ակտիվ տարածումը, դոկտրինալ առումով ձևավորում են պետության պոզիտիվ պարտավորության բովանդակային կառուցվածքը և հանդես են գալիս որպես կանխարգելիչ իրավունքի հիմնարար գործիքներ [12, 24]: Ժամանակայնության սկզբունքը սերտորեն կապված է կանխարգելման և նախագոյազմման սկզբունքների հետ և պահանջում է, որ տեղեկատվությունը տրամադրվի ոչ թե արդեն առաջացած վնասից հետո, այլ ռիսկի առաջացման փուլում՝ ապահովելով հանրության կողմից վարքագծի փոփոխության, պետական միջամտության պահանջման և որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու իրական հնարավորություն [12, 22]:

Լիարժեքության պահանջը, իր հերթին, ձևակերպվում է որպես տեղեկատվության բավարարության ստանդարտ, որի համաձայն պետությունը պարտավոր է տրամադրել ռիսկի բնույթի, ազդեցությունների, տարածական և ժամանակային պարամետրերի, ինչպես նաև կանխարգելման և մեղմման միջոցների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն [12, 24]: Այս երկու տարրերը միասին ապահովում են, որ հանրությունը կարողանա ձևավորել տեղեկացված դիրքորոշում և իրականացնել իր իրավունքները ոչ թե ձևական, այլ բովանդակային իմաստով [12]:

Միաժամանակ հանրային իրազեկման համակարգում առանցքային նշանակություն

ունի ակտիվ տարածման սկզբունքը, որը պետության պարտավորությանը տալիս է ինքնագործուն և շարունակական բնույթ [12, 24]: Այս մոտեցմամբ պետությունը չի կարող սահմանափակվել միայն պահանջով տեղեկատվություն տրամադրելու մոդելով, այլ պարտավոր է սեփական նախաձեռնությամբ բացահայտել և տարածել այն տեղեկատվությունը, որը վերաբերում է հանրային առողջությանը և շրջակա միջավայրին սպառնացող վտանգներին [12, 24]: Այս պարտավորությունը հիմնավորվում է պոզիտիվ պարտավորությունների տեսությամբ, տեղեկատվական անհավասարության հաղթահարման անհրաժեշտությամբ և շրջակա միջավայրի վնասների հաճախ անդառնալի բնույթով [24]:

Միջավայրային վտանգի պայմաններում տեղեկատվության ստացման իրավունքը Հայաստանի Հանրապետության իրավակարգավորման մեջ պետք է դիտարկվի նախ և առաջ սահմանադրական հենքի շրջանակում, քանի որ հենց Սահմանադրությունն է ձևավորում պետության պոզիտիվ պարտականությունների բովանդակությունն ու ծավալը [6]: Թեև գործող սահմանադրական տեքստը ուղղակիորեն չի ամրագրում «շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության իրավունքը» որպես առանձին ինստիտուտ, սակայն դրա համակարգային մեկնաբանությունը, մասնավորապես՝ տեղեկատվություն ստանալու ազատության, կյանքի և առողջության պաշտպանության (Սահմանադրության 25-րդ հոդված) և անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության (31-րդ հոդված) համադրությամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ նման իրավունքն առկա է որպես սահմանադրական իրավունք [6, 7]:

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի ոլորտում կիրառվում են «վնաս», «ռիսկ», «վտանգավոր գործունեություն» և այլ հարակից հասկացություններ, սակայն բացակայում է «միջավայրային վտանգ» հասկացության միասնական և համակարգված իրավական ձևակերպումը: Այս հանգամանքը հանգեցնում է նրան, որ իրավական գնահատումը հիմնականում կենտրոնանում է արդեն առաջացած վնասի վրա [6]: Այս պայմաններում անհրաժեշտ է տեսականորեն ձևակերպել այնպիսի հասկացություն, որը թույլ կտա իրավական կարգավորումը տեղափոխել ռիսկի մակարդակ և ապահովել պետության պոզիտիվ պարտավորությունների արդյունավետ ակտիվացումը [24]:

Այս համատեքստում տեղեկացվածությունը դառնում է այդ իրավունքների արդյունավետ իրացման նախապայման, իսկ պետության վրա դրվում է ակտիվ գործողությունների իրականացման պարտականություն՝ ապահովելու հանրության իրազեկվածությունը շրջակա միջավայրի վտանգի վերաբերյալ [12, 24]:

Օրենսդրական մակարդակում տեղեկատվության իրավունքի ապահովումը իրականացվում է առաջին հերթին «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով, որը ձևավորում է տեղեկատվության մատչելիության ընդհանուր իրավական ռեժիմը [7]: Օրենքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ նախատեսում է նաև տեղեկատվության նախաձեռնողական հրապարակում՝ հատկապես այն դեպքերում, երբ տեղեկատվության հրապարակումը կարող է կանխել շրջակա միջավայրին, հանրության առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող վտանգը [7]:

Կարգավորումն ունի էական թերություններ. օրենքը չի սահմանում «վտանգ» հասկացության հստակ չափանիշներ, չի կոնկրետացնում «անհապաղ» հրապարակման ժամանակային շրջանակը, չի նախատեսում տեղեկատվության տարածման պարտադիր ձևաչափեր և, ամենակարևորը, չի ամրագրում արդյունավետ պատասխանատվության մեխանիզմներ այս պարտականության չլատարման համար [6, 7]: Արդյունքում, տվյալ նորմը հաճախ մնում է դեկլարատիվ [6]:

Վարչարարության ոլորտում գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը լրացուցիչ հիմք է ստեղծում տեղեկատվության իրավունքի ապահովման համար՝ ամրագրելով, որ վարչական մարմինները պարտավոր են իրենց լիազո-

րություններն իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության, համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների հիման վրա: Այս սկզբունքները ենթադրում են, որ շրջակա միջավայրի վտանգի դեպքում տեղեկատվության տրամադրումը պետք է դիտարկվի որպես պարտադիր վարչարարական գործողություն: Մինևույն ժամանակ օրենքը նախատեսում է արագացված վարչարարություն անմիջական վտանգի դեպքերում, ինչը կարող էր ծառայել նաև տեղեկատվության արագ փոխանցման հիմք [7]: Սակայն այստեղ բացակայում է հստակ նորմատիվ կապը վարչարարական գործողությունների և տեղեկատվության տրամադրման միջև, ինչի հետևանքով առաջանում է իրավական բաց՝ հատկապես արտակարգ կամ վտանգավոր իրավիճակներում հանրության իրազեկման պարտականության առումով [6]:

Տեղեկատվության տարածման ինստիտուցիոնալ հիմքերը լրացվում են «Ձանգվածային լրատվության մասին» օրենքով, որը երաշխավորում է տեղեկատվության ազատ շրջանառությունը և լրատվամիջոցների գործունեությունը: Այն ապահովում է այն միջավայրը, որտեղ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասնել հանրությանը, սակայն չի նախատեսում պետական մարմինների ուղղակի պարտականություն՝ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ: Այս հանգամանքը վկայում է, որ տեղեկատվության տարածման համակարգը կառուցված է հիմնականում «ազատության», այլ ոչ թե «պարտականության» տրամաբանության վրա [7]:

Միաժամանակ տեղեկատվության իրավունքը սահմանափակվում է պետական և ծառայողական գաղտնիքի ինստիտուտով, որը թույլ է տալիս որոշ տեղեկություններ դասել գաղտնիք՝ ազգային անվտանգության նկատառումներով: Թեև նման սահմանափակումները սկզբունքորեն արդարացված են, սակայն օրենսդրությունը չի ապահովում բավարար հավասարակշռություն հանրային շահի և գաղտնիության պաշտպանության միջև՝ հատկապես շրջակա միջավայրի վտանգների վերաբերյալ տեղեկատվության դեպքում [18]: Գործնականում սա կարող է հանգեցնել այն իրավիճակին, երբ հանրային նշանակություն ունեցող բնապահպանական տեղեկությունները սահմանափակվում են՝ առանց բավարար հիմնավորման [6]:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության իրավակարգավորումը ձևավորում է տեղեկատվության իրավունքի որոշակի համակարգ՝ սկսած սահմանադրական հիմքերից մինչև ոլորտային օրենքներ, սակայն այդ համակարգը բնութագրվում է մասնակիության և ոչ բավարար համակարգավածության հատկանիշներով: Թեև առկա են կարևոր առաջադեմ նորմեր, մասնավորապես՝ վտանգի դեպքում տեղեկատվության նախաձեռնողական հրապարակման պարտականությունը, դրանց արդյունավետ իրացումը խոչընդոտվում է հստակ ընթացակարգերի, ինստիտուցիոնալ վերահսկողության և պատասխանատվության մեխանիզմների բացակայությամբ: Ուստի կարելի է եզրակացնել, որ գործող իրավակարգավորումը ապահովում է տեղեկատվության իրավունքի իրականացման ձևական հիմք, սակայն չի ստեղծում այնպիսի ամբողջական և արդյունավետ համակարգ, որը կկարողանա լիարժեք ապահովել շրջակա միջավայրի վտանգների վերաբերյալ հանրության ժամանակին և ամբողջական իրազեկումը [6, 7]:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) ինստիտուտի արդյունավետությունը կախված է տեղեկատվության մատչելիությունից, քանի որ առանց դրա հանրային մասնակցությունը և կանխարգելումը դառնում են ձևական [12, 24]: Սակայն վերոգրյալ սահմանադրական և օրենսդրական վերլուծության համադրումը ցույց է տալիս, որ, թեև Հայաստանի Հանրապետության իրավակարգավորումը ձևականորեն ամբազանում է շրջակա միջավայրի վտանգների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պարտականության որոշ տարրեր, այն չի ապահովում այդ պարտականության համակարգային և գործնական իրականացումը [6, 7]: Մասնավորապես, բացակայում են ՇՄԱԳ գործընթացի շրջանակում վտանգի վերաբերյալ տեղեկատվության պարտադիր, ժամանակին և

կառուցակարգված հաղորդման հստակ մեխանիզմներ, ինչի արդյունքում տեղեկատվության տրամադրումը հաճախ կախված է վարչական մարմինների հայեցողությունից [6]: Այս հանգամանքը էապես սահմանափակում է կանխարգելման սկզբունքի արդյունավետ իրացումը և վկայում է, որ տեղեկատվության իրավունքը, որպես պետության պոզիտիվ պարտականություն, շարունակում է մնալ ոչ լիարժեք ինստիտուցիոնալացված՝ հատկապես շրջակա միջավայրի վտանգների պայմաններում հանրության պատշաճ իրազեկման տեսանկյունից [24, 6, 7]:

Եզրակացություն և առաջարկներ

Վերլուծության արդյունքներով կարելի է ձևակերպել, որ Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վտանգի պայմաններում տեղեկատվության մատչելիության իրավական համակարգը գտնվում է ձևավորման և զարգացման փուլում. այն ունի անհրաժեշտ նորմատիվ հիմքերը, սակայն չի ապահովում դրանց ամբողջական և արդյունավետ իրացումը: Տեղեկատվության մատչելիությունը, որպես պետության պոզիտիվ պարտականություն, պետք է դիտարկվի որպես տեղեկատվություն տրամադրելու հստակ իրավական պարտավորություն:

Անհրաժեշտ է սահմանել հանրային իրազեկման պարտադիր համակարգ, որը կգործի ակտիվ տարածման սկզբունքով և չի սահմանափակվի միայն դիմումի հիման վրա տեղեկատվություն տրամադրելով: Այս համակարգը պետք է ապահովի տեղեկատվության ժամանակայնությունը, լիարժեքությունը և շարունակականությունը՝ որպես շրջակա միջավայրի ռիսկերի կանխարգելման հիմնարար մեխանիզմ:

Այս համատեքստում նպատակահարմար է առաջարկել մի շարք գիտական և օրենսդրական ուղղություններ, որոնք կարող են ապահովել տեղեկատվության իրավունքի առավել արդյունավետ իրացումը:

Առաջին՝ անհրաժեշտ է սահմանադրական մակարդակում ամրագրել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության իրավունքը և պետության պոզիտիվ պարտականությունը՝ այն ամրագրելով որպես ինքնուրույն իրավունք կամ առնվազն որպես հստակ ձևակերպված պարտականություն՝ կապված կյանքի և արժանապատիվ գոյության ապահովման հետ: Սա հնարավորություն կտա դուրս բերել տվյալ իրավունքը մեկնաբանության ոլորտից և դարձնել այն ուղղակի կիրառելի նորմ:

Երկրորդ՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում անհրաժեշտ է կոնկրետացնել վտանգի դեպքում տեղեկատվության տրամադրման պարտականությունը՝ սահմանելով «**միջավայրային վտանգ**» հասկացության իրավական չափանիշներ, տեղեկատվության հրապարակման հստակ ժամկետներ, պարտադիր ձևաչափեր և չտրամադրելու դեպքում արդյունավետ պատասխանատվության մեխանիզմներ: Անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել տեղեկատվության մատչելիության բովանդակային չափանիշները՝ ներառելով դրա լեզվական, կառուցվածքային և գործնական հասանելիությունը, որպեսզի տեղեկատվությունը լինի ոչ միայն ձևականորեն հասանելի, այլև ընկալելի և կիրառելի հանրության համար, ինչը հանդիսանում է տեղեկատվության իրավունքի արդյունավետ իրացման անբաժանելի պայման: Առանց այս տարրերի կարգավորումը մնում է դեկլարատիվ:

Երրորդ՝ անհրաժեշտ է ՇՄԱԳ գործընթացում ներդնել տեղեկատվության պարտադիր, շարունակական և փուլային հաղորդման ինստիտուտ՝ ապահովելով, որ հանրությունը տեղեկացվի ոչ միայն նախագծի վերջնական գնահատման, այլ նաև դրա բոլոր միջանկյալ փուլերում առկա ռիսկերի վերաբերյալ: Սա կապահովի հանրային մասնակցության իրական, այլ ոչ ձևական բնույթը:

Չորրորդ՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելի դարձնելու և դրա հրապարակման պարտականության կատարման վերահսկողությունը պետք է վերապահվի շրջակա միջավայրի անկախ խորհրդին, որը պետք է ունենա սահմանադրական կամ օրենքով ամրագրված կարգավիճակ և համապատասխան լիազորություններ՝ գնահա-

տելու տեղեկատվության ամբողջականությունը, ժամանակայնությունը և հավաստիությունը, ինչպես նաև ապահովելու հանրային շահի պաշտպանությունը տվյալ ոլորտում: Նման ինստիտուցիոնալ լուծումը թույլ կտա նվազեցնել վարչական մարմինների հայեցողության ազդեցությունը և ապահովել տեղեկատվության մատչելիության պարտականության արդյունավետ, համակարգված և անկողմնակալ իրականացում:

Այս առաջարկությունների իրականացումը թույլ կտա վերափոխել տեղեկատվության մատչելիության ինստիտուտը ձևական իրավական նորմերից դեպի արդյունավետ մեխանիզմ՝ ամրապնդելով պետության պոզիտիվ պարտավորությունների իրականացման համակարգը և ապահովելով շրջակա միջավայրի վտանգների պայմաններում մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-142>

Գրականություն

1. Բոյդ Դ. (Boyd D.), Շրջակա միջավայրի իրավունքների հեղափոխություն (The Environmental Rights Revolution):
2. Բուդաևա և այլք ընդդեմ Ռուսաստանի (Budayeva and Others v. Russia), դիմումներ № 15339/02 և այլք, 20 մարտի 2008:
3. Գերմանիայի հիմնական օրենք (Grundgesetz), հոդված 20ա:
4. Գուեռա և այլք ընդդեմ Իտալիայի (Guerra and Others v. Italy), դիմում № 14967/89, 19 փետրվարի 1998 (Մեծ պալատ):
5. Եվրոպական դատարան, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց (Guide on Article 8 of the Convention), 2023 թ.:
6. Եվրոպական միության դիրեկտիվ 2003/4/ԵՇ (Directive 2003/4/EC)՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության մասին:
7. Եվրոպական միության դիրեկտիվ 2004/35/ԵՇ (Directive 2004/35/EC)՝ բնապահպանական պատասխանատվության մասին:
8. Էկվադորի Սահմանադրություն (Constitution of Ecuador), 2008, հոդված 71:
9. Էյրին ընդդեմ Իռլանդիայի (Airey v. Ireland), դիմում № 6289/73, 9 հոկտեմբերի 1979:
10. Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի (López Ostra v. Spain), դիմում № 16798/90, 9 դեկտեմբերի 1994:
11. Հաջին ընդդեմ Ադրբեջանի (Hajiyev v. Azerbaijan), դիմում № 37883/11, 16 նոյեմբերի 2021:
12. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ. (փոփոխություններով):
13. Հարավային Աֆրիկայի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of South Africa), 1996, հոդված 24:
14. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights), հոդվածներ 2, 8, 10:
15. Շելթոն Դ. (Shelton D.), Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը (Human Rights and the Environment):
16. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2014:
17. Ռազզաքուե Ջ. (Razzaque J.), Բնապահպանական կառավարում և մարդու իրավունքներ (Environmental Governance and Human Rights):
18. Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին (Rio Declaration on Environment and Development), 1992, սկզբունքներ 10, 15:
19. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2004:

20. Վերին ԿլիմաՍենյորինեն Շվայց և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein Klima Seniorinnen Schweiz and Others v. Switzerland), դիմում № 53600/20, 9 ապրիլի 2024 (Մեծ պալատ):
21. Տարսաշագ ազ Սարադշագոգոկերտ ընդդեմ Հունգարիայի (Társaság a Szabadságjogokért v. Hungary), դիմում № 37374/05, 14 ապրիլի 2009:
22. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2003:
23. Օներյըլդըզ ընդդեմ Թուրքիայի (Öneryıldız v. Turkey), դիմում № 48939/99, 30 նոյեմբերի 2004 (Մեծ պալատ):
24. Օրհուսի կոնվենցիա (Aarhus Convention)՝ շրջակա միջավայրի հարցերով տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության և արդարադատության հասանելիության մասին, 1998:
25. Ֆադեյենա ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia), դիմում № 55723/00, 9 հունիսի 2005:
26. Ֆրանսիայի շրջակա միջավայրի խարտիա (Charte de l'environnement), 2005:

Позитивная обязанность государства по обеспечению общественной осведомлённости об экологической опасности

Туманян Карен

Резюме

Ключевые слова: «экологическая опасность», осведомленность общественности, доступ к информации, принцип предосторожности, равенство информации, независимый экологический совет

В статье обосновывается, что осведомленность общественности об экологических опасностях является ключевым компонентом позитивных обязательств государства, обеспечивающих своевременное, полное и доступное предоставление информации о рисках.

Понятие «экологическая опасность», используемое в статье, представляет собой доктринальную формулировку, предложенную автором, разработанную в рамках соответствующих научных исследований и направленную на дальнейшее уточнение превентивного характера экологического права. Это понятие заполняет пробел в правовом регулировании, переводя правовую оценку со стадии ущерба на стадию риска.

Применение понятия «экологическая опасность» позволяет активировать правовые механизмы на стадии риска, обеспечивая профилактику, в то время как информированность является предпосылкой для практической реализации этого подхода. Это компонент защиты жизни и неприкосновенности частной жизни и институциональная основа экологического управления.

В то же время, правовое регулирование Республики Армения, хотя и формально закрепляет право на доступ к информации, не обеспечивает его полного и систематического осуществления из-за отсутствия четких стандартов, процедур и механизмов контроля. В этом контексте институционализация контроля за доступом к информации посредством независимого экологического совета рассматривается как необходимое условие для эффективного выполнения государством своих позитивных обязательств.

The State's Positive Obligation to Ensure Public Awareness Regarding Environmental Hazard

Tumanyan Karen

Summary

Key words: *"environmental hazard", public awareness, access to information, precautionary principle, information equality, independent environmental council*

The article substantiates that public awareness of environmental hazards is a key component of the state's positive obligations, ensuring the provision of timely, complete and accessible information on risks.

The concept of "environmental hazard" used in the article is a doctrinal formulation proposed by the author, which was developed within the framework of relevant scientific research and is aimed at further clarifying the preventive nature of environmental law. This concept fills the gap in legal regulation, moving the legal assessment from the damage stage to the risk stage.

The application of the concept of "environmental hazard" makes it possible to activate legal mechanisms at the risk stage, ensuring prevention, while being informed is a prerequisite for the practical implementation of this approach. It is a component of the protection of life and privacy and an institutional basis for environmental management.

At the same time, the legal regulation of the Republic of Armenia, although formally enshrining the right to access to information, does not ensure its full and systematic implementation, due to the lack of clear standards, procedures and control mechanisms. In this context, the institutionalization of control over access to information through an independent environmental council is considered a necessary condition for the effective implementation of the state's positive obligations.

Ներկայացվել է 01. 12. 2025 թ.
Գրախոսվել է 07. 04. 2026 թ.
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.